



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՐԱԱԳԻՐ
ԶԱՐԽԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԱԳՐԱԿԱՆ — Ամայի
ԾԱԳՈՒՄՆ ԵՔԷ ՄԱՐԳԱՐԻՈՒԹԵԱՆ — Սալմաշի —
Մարգալէից Դպրոցները
«ՏԱՃԱՐ»ի պարզառանութիւնները
Հայկական-գեղեցկութիւններ
ՅՈՒՆԻՍ ԵՒ ՊԱՄՓԻԷՂՍ — Առաջին Գրիստոնեա-
ներու Ժամանակիւն պատմութիւն
Շիրվանգատէի դիրքը Գուսանայ Դրականութեան
Պատմութեան մէջ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ — Շաբթուան լուծեր
Տխրունի եւն.

ԶԱՐԽԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
ԳԵՈՐԳ-ՄԵՍՐՈՊ
ՏԻՐԱՅՐ ՎՐԴ.
ՏԻՐԱՆ ԿԱՄԱՐԱԿԱՆ
ԼԻՈՆ ԹՈԼՍՏՈՅ
Մ. Յ.

Տպագր. Տ. ՏՕՂԱՐԱՄԱՃԵԱՆ
Սուրբան-Համալի Մօշա-Թաշը, Թիւ 16
Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”Ի

ՀԱՅԱՍՏԱՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ

Պոլսոյ և Գաւառաց՝ տարեկան	40 դրոշ
Արեւմտահայաստանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օղար
Ձեռքէ կը ծախուի պահլը	40 փարա

Հինգ քաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄԱՍՏԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

« ՏԱՃԱՐ »-ի թէ՛ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գիտնել առ Զարմայր Քաճաճաց Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պետիկթաշ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » غزتمى مدبرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

« ՏԱՃԱՐ » ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արուէն Քհնյ. Դերձակեան

ԱՂԵՔԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Քհնյ. Գա-
բիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆիթեանեան

ԱՅԼԹԱՊ. — Տ. Գարեգին Քհնյ. Պողար-
եան

ԱՅԺՅՈՆ ԳԱՐԱՆԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Կրկնեան

ԲԱՐԵՆԴ. — Մ. Սանտեան էֆ.

ԴԱՆԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարսէն Եպս.
Կիւլէսեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Քհնյ. Սար-
գիսեան

ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքեան

ԵՐԶՆԿԱ. — Տ. Մարտիկ Քհնյ. Թորոսեան

ԶՄԻՒՆԻԱ. — Տ. Յարութիւն Քհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դաւուտ Քհնյ. Տ.
Դաւուտեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորոսեան

ԿԻՒՄԻՒԼԻՆԷ. — Տ. Ներսէս Քհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Քհնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռոկոս Քհնյ. Պրապեան

Շ. ԴԱՐԱՆԻՍԱՐ. — Տ. Եսայի Քհնյ.
Տառեան

ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեանեան

ՊԱՆՏՐՈՒՍ. — Առաջնորդ Տ. Ստեփան
Կարապետ Եպիսկ. Մաղլուքեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմիւքեան

ՌՈՒՍՏՈՒՐ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Մըրժ-
էլեան

ՌԱՏՈՒՐ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ապրանեան

ՈՍՄԱՏ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտարապետեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Քհնյ. Օտարապետեան

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Քհնյ. Թաթումեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմաքեան Քհնյ. Տրէզ-
եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան

ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Քհնյ. Թէրզեան

ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Քհնյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պապ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քհնյ. Դերձակեան

ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշանեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 22

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՍԱՅԻ՜

Ամայի՜ :

Գիտէ՞ք, ո՛րքան արհաւիրից նշանա-
կութիւն ունի այդ բառը : Ան կը ներ-
կայացնէ վիճակ մը, որ ոչինչ ունի
մխիթարական, որ մարդկային մտքին
վրայ կը թողու ամենէն անստամբմոք
տպաւորութիւնը :

Հոգեհատոր սիրելիի մը մահէն
ետքը, զգացած էք պակասը զոր կը
թողու ան տունին մէջ . . . ձեր սրտին
մէջ : Ո՛րքան դառն է տեսնել պա-
րայ՝ անոր գրաւած անկիւնը՝ բազմու-
ցին վրայ, ուր նստած կը գտնէիք զին-
քը ամէն իրիկուն, աշխատութենէ
դարձին, երբ ծեփունի մայր մըն է
անդա՛րձ ձեզմէ՛ բաժնուողը : Կամ ո՛ր-
քան խորունկ վիշտով մը կը դիտէք
թէ ա՛լ հեռացած է վերջապէս ան որ
ձեր կէսն էր, որ կը փութար դիմա-
ւորելու զձեզ՝ երբ խոնջ, վստկաաքել
կը վերադառնայիք ձեր ընտանեկան
բոյնը, եւ իր մէկ անուշ ժպիտովը
կը մոռցնէր ցորեկուան բոլոր յոգնու-

թիւնները, բոլոր սիրահամոռնները :

Պերճանքը զոր շռայլած էք ձեր
տանը մէջ, շքեղ կարասիները, ու
բոլոր փայլուն ոչնչութիւնները որոնց-
մով լեցուցած էք ձեր ընակարանը,
կրնա՞ն արդեօք փոխարինել այն որ
պակսած է, հոգի՛ն՝ ընակարանին :
Կրնա՞ն մոռցնել ամայութեան տխուր
տպաւորութիւնը որուն կ'ենթարկուիք,
կրնա՞ն լեցնել ձեր հոգիին պարապու-
թիւնը : Ամայի տունը վանդակ մըն է,
բոյն մը անոնց թռչունի : Գերեզման մըն
է ամայի տունը . ոգեւորութիւնը,
խինդ ու ծիծաղը, մանուկներու
գուարթ ու չարաճճի աղմուկները՝
կեանքը, ոգեւորութիւնն են անոր :

Այցեւա՛ծ էք ամայի, աւերակ քա-
ղաք մը, անցած էք անոր փողոցներէն
ուր մարդկային հետք մը, ստուեր մը
չի տեսնուիր : Լռութիւնը, համապատ-
փակ լռութիւնը կը տիրապետէ հոն :
Մահը ինքզինք զգալի կ'ընէ ամէն
կողմ : Փլատալները՝ ժամանակի ըն-
թացքին մէջ՝ ծածկուած են հողի ա-
ռաւել կամ նուազ թանձր խաւերով,
եւ մ'նացետլ շէնքերը, անոնք որ դա-
րերու ընթացքին սէգ հպարտութեամբ

մը կը բարձրացնեն իրենց պարիսպները՝ կիսափուլ բայց հոյակապ, աւելի կը խորոնկցնեն մ'նացեալներուն յառաջ բերած ախուր տպաւորութիւնը, յիշեցնելով երբեմնի փառապանծ օրերը քաղաքին, ուր կեանքի եռեւեփ գործունէութիւն մը կը ախրապետէր: Քաղաքը մեռած է հիմայ՝ իր աւերակոյտի վիճակին մէջ, ինչպէս մեռած պիտի ըլլար, եթէ իր բոլոր շէնքերը կանգուն մ'նային իրենց բովանդակ շքեղանքին մէջ, բայց զուրկ մարդկային կեանքոտ ոգեւորութենէ:

Պատահած է ձեզ երբէք լսել օրեր այց մը տալ մայրաքաղաքի հայ եկեղեցի մը: Շէնքը կանգուն է, փառաւոր, իր բոլոր շքեղանքին մէջ, իր նուիրականութեամբը օծուն: Քահանան մը մըթմըթալով կ'երգէ հոգեզմայլ շարականներ, գոհար աւանդները մեր իրանաշնորհ նախնեաց, կը մըմ'նջէ աղօթքներ ու մաղթանքներ ի դիմաց ժողովրդեան, անոր ապաշխարութեան հառաչները բարձրացնելով տիեզերքի բարեգութ Արարչին, որուն օրհնութիւնը կը հայցէ, որուն հզօր պաշտպանութիւնը կը խնդրէ այդ տառապեալ ժողովուրդին համար: Բայց մէկ է ան, ժողովուրդը: Աւա՛ղ, պարապ են նստարանները: Հազիւ անկիւն մը կ'երեւայ պառաւ կին մը որ իր մեղքերը կուլայ, ասորը ներկայութիւնը աւելի՛ կը շեշտէ սակայն ամայութեան, լեքումի տպաւորութիւնը: Եւ այդ տըպաւորութիւնը ընդհանուր է, տեւական, դժբախտաբար, նոյն իիկ կիրակի օրեր, ուր շատ եկեղեցիներու նստարանները պարապ կը մ'նան, ուր վերնատունները չեն լեցուիր բարեպաշտուհի տիկիներով: Այո այսպէս է է շաբթուան բոլոր օրերը, ապաշխարութեան թէ առաւել կամ նուազ ծանօթ սուրբերու տօնակատարութեան ատեն: Այսպէս է նաեւ այն օրերը,

— ինչպէս այս շաբաթը եւ յառաջիկայ մէկ քանի շաբաթներն ալ, — երբ Հայուն համար նուիրական, հոգեցունց յիշատակներ կ'արթնցունեն եկեղեցւոյ օծուն կամարներուն տակ, յիշատակներ որ կը պատմեն մեզի Հայուն դարձն ի Քրիստոնէութիւն, անոր փայլուն, ոգեւորեալ օրերը, անոր սրբամենալ Հայրապետներուն անձնուէր կեանքն եւ մարդասիրական գործերը. շրջան մը ամբողջ ուր Հայը՝ արգէն աշխարհային փառքի լաւագոյն օրերուն մէջ, բախտը կ'ունենար նոր կրօնքով մը օժտուելու, մանելու քաղաքակրթութեան ճամբուն մէջ, օգտուելու գիւրով ու գրականութիւնով, սոսնալու իմացական զարգացում, ամուր պատրաստութիւն մը այն դժնդակ պայքարին, ուրկէ՛ թէ եւ կտրտուած, անդամատուած, յաղթական պիտի ելլէր, պահելով իր գոյութիւնը ինքնուրոյն, իր կրօնքը պառաւական, իր իմացականութիւնը՝ գերակշիռ:

Եւ այդ յիշատակներուն հանգէպ, որ մեր սրտերը պէտք է հրճուեցնէին անուշ երոնուութեամբ մը, որ պէտք է ոգեւորէին զմեզ՝ հոգեկան անճառ վայելքով մը, անտարբեր են մեր սիրտերը, պարապ են անոնք ամենէն նուիրական աւանդութիւններու առջեւ, անհոգ, անտարբեր բոլորովին:

Աւա՛ղ, մեր հոգիները ամայի են մեր եկեղեցիներուն պէս, ուր կը պակսի ժողովուրդը, ինչպէս կը պակսի ամենէն կարեւորը մեր հոգեկան կեանքին, մեր սրտի կեանքին մէջ, հաւատքը զօրաւոր, յոյսը սրտախնդող, սէրը անձնուրաց, անձնուէր:

Եւ տակաւին կը պնդենք թէ մենք հստատացեալ ժողովուրդ մըն ենք:

Ինչ հեղեղութիւն:

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ԾԱԳՈՒՄՆ ԵՐԱՅԱԿԱՆ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Ա. (*)

Ս Ա Մ Ո Ւ Է Լ

Մարգարեից Դպրոցները

Բայց ճշմարիտ է թէ դպրոց անունը, որ զանոնք բարացուցելու համար ընտրուած է, ամենէն յարմարագոյնն է՝ անոնց կազմութիւնը յատկանշելու համար: Անոնց անդամները սովորաբար կը կոչուին ոճիֆ մարգարեից(1), ինչ որ ստորագասութեան կամ ստորակարգութեան գաղափարը կը ներկայացնէ. մանաւանդ թէ անոնց մեծերը կամ առաջնորդները կը կոչուին հայր անուամբ(2): Այլուր հանդիպածս կ'ըլլանք այնպիսի տեսարանի մը, ուր Սամուէլ, կարգ մը մարգարէներու գլուխը կեցած, կարծես հրահանգներ կուտայ անոնց(3): Խնդիր է սակայն թէ ի՞նչ էր անոնց կեանքը, ապրելակերպն ու հրահանգները:

Կ'երևի թէ չահաբեր ու ծանր աշխատութիւններ չունէին անոնք: Եղիսէ կը թուու իր արօրը՝ Եղիայի միջոցաւ մարգարէական կեանքին կոչուելէն ետքը(4): Ամսվս կ'ըսէր թէ ինքը մարգարէից դպրոցներու չէր վերաբերեր, այլ հովիւ էր ոչխարաց(5): Ուրիշ տեղ մը հողագործութիւնը իբրեւ հակադրութիւն կը ծառայէ մարգարէութեան(6): Մարգարէներուն հազուադէպ, թէ իսկ ի սկզբան չի տարբերիր հառարակ ժողովուրդին զգեստներէն, կը թուի սակայն թէ շատ

կանուխէն որոշ եւ ինքնայատուկ տարազի ձեւն առաւ ան: Եղիա սովորաբար իբրեւ վերարկու կը կրէր մաշկեակ մը՝ կենդանիի մորթ մը եւ մաշկեղէն դօ ի մը(1): «Եւ ոչ զգեցցին կրկնոցս մազեղէն ի խաբել» կ'ըսէ Անանուն մարգարէ մը, սուտ մարգարէից նկատմամբ(2), որ քարտաքին ոչ մէկ կերպով չէին տրեւեր Եահվէի մարգարէներէն: Ոչ միայն իրենց զգեստներուն(3) այլ նաեւ իրենց սնունդին մէջ ալ սակաւապէտ ըլլալ կը թուին անոնք: Եւ հաւանաբար ժողովրդեան նուէրները, որ սովորաբար հացէ, պատուղէ, մեղրէ կը բաղկանային, անոնց ամենէն գլխաւոր եկամուտը կը կազմէին(3): Գրեթէ միասին կ'ապրէին անոնք, եւ երբեմն կարի մեծ թուով(4), եւ միասին կը ճաշէին(5):

Այս էր ահա այդ նախկին տեսանկյուններու կեանքն ու ապրելակերպը: Իսկ անոնց զբաղումը մարգարէութիւնն էր անշուշտ: Մարգարէութիւնն որ աւելի յափշտակութեան վայրկեաններու մէջ յայտնուած աստուածային կամքի մը յայտնութիւնն էր: Այդպիսի մարգարէանալու իրենց յատուկ եղանակն ունէին անոնք: Երաժշտութիւնը, ըլլայ ձայնական կամ գործիական, շատ մեծ դեր կը կատարէր անոնց մէջ: Կարծես տեսակ մը տէրվիչներու խումբեր էին անոնք, որոնք բարձունքներէն վաճ կ'իջնէին, իրենց առջեւէն թմբուկներ, սրինգներ, փող ու քնար(7), երգելով, աղաղակելով, շարժակելով ու խմբերգներ կազմելով: Բաւական էր անոնց մէջ գտնուիլ եւ կամ անոնց հանդիպիլ, միեւնոյն խանդն ու յափշտակութիւնը զգալու, մարգարէական շնորհն ընդունելու համար(8):

(*) Շար 21րդ. Թիւէն:

(1) Ամսվս է. 14, Գ. Թգ. Ի. 35: Գ. Թգ. Բ. 3, 5, 15: Գ. 1. Ե. 22. 2. 1. Թ. 1:

(2) Գ. Թգ. Բ. 12:

(3) Ա. Թգ. ԺԹ. 20:

(4) Գ. Թգ. ԺԹ. 20

(5) Ամսվս է. 14:

(6) Զաբ. ԺԳ. 4, 5:

(1) ԴԹգ. Ա. 8:

(2) Զաբ. ԺԳ. 4:

(3) Ա. Թգ. Թ. 7, 3: ԳԹգ. ԺԳ. 3. Գ. Թգ. Դ. 42: Գ. Թգ. ԺԸ. 4. 11. ԴԹգ. Ե. 15, 16:

(4) Գ. Թգ. Բ. 16: Զ. 1: Հմտեւ նաեւ Գ. Թգ. ԺԸ. 4, 13:

(5) Գ. Թգ. Դ. 38:

(7) Ա. Թգ. Ժ. 5

(8) Ա. Թգ. Ժ. 6. ԺԹ. 18-24:

Աւելորդ էր, անշուշտ, յիշել ոմանց այն չափազանց խժրժող կարծիքը, որուն համեմատ մարգարէները կը ներկայացուին իբրեւ այլասերած, յիմար, եսասէր, մեյամաղձոտ, վրէժխնդիր ջղագարներ եւն. (1), որոնք իրենց լեռնոտ կլիմային ծնունդն եղած պիտի ըլլան: Ոչ, մարգարէները այլասերած մարդեր չէին երբէք. այլ ընդհակառակն այլասերած մարդկութեան մը վերանորոգիչները, եթէ կարելի էր այսպէս ըսել:

Իրաւ, մարգարէից կրօնական յափշտակութիւնը երբեմն ա՛յնքան կը զօրանար, որ ջղային բուն շարժումներ, թաւալումներ կ'ունենային անոնք. այն աստիճան որ յիմար անուան նման յորջորջումով մը կ'որակուին (2), եւ սակայն ոչ մէկ ապացոյց չի կրնար ըլլալ ան, հաստատելու համար որ մարգարէական ոգին այլասերած մարդերու ոգին ըլլայ: Ողջամիտ քննադատութիւնը այս աստիճան չի կրնար յառաջ երթալ. քանի մը ցանցառ օրինակներ բաւական չեն անշուշտ ամբողջ մարգարէութիւնը միեւնոյն նկարագրով որակելու եւ մերժելու համար: Սա չափ պիտի կրնային ըսել թէ հին դարերու մէջ, հոգեբանական օրէնքներու եւ երեւոյթներու պատճառին անժանօթ, մարդիկ յաճախ կը շփոթէին ջղային յափշտակութիւնը եւ երբեմն նոյն իսկ յիմարութիւնը մտքի քոյտնաստեութեան, մտասեւեռումին, ներշնչումին հետ: Ի՞նչ պէտք է հետեւցնել ասկէ. միթէ պիտի կրնայինք երկու եզրերն ու հասկացողութիւնները իրարու հետ շփոթել բացարձակապէս: Ի՞նչ, միթէ խանդարուած իմացականութիւններու ծնունդը պիտի համարինք այն բոլոր գրուածները, մարդկային մտքի ամենէն չքեղ արտադրութիւնները, զորոնք պիտի ուսումնասիրենք հետզհետէ:

Երբէք՝ Մարգարէից գործն ու դերը չատ բարձր ու վսեմ է, բաղդատելու համար այլասերած մարդերու անիմաստ

գործերուն հետ: Մարգարէից գալուցները ամենէն բեղմնաւոր ու կենսունակ ըջիջները եղած են հրէական կրօնի ու բարոյական զարգացումի տեսակէտով: Այս գալուցներուն մէջ էր որ միաստուածեան հաւատքը կը հաստատուէր, կը պահուէր, կը տարածուէր ու կը հոգեկանանար: Այս գալուցներուն աւանդութիւնն է որ սերունդէ սերունդ կ'անցնէր, հակառակ ազգային ամէն կերպ յարափոփոխութեանց. կը փոխանցուէր կրօնական հաւատքի այն գերազանց գանձը որ փոքրիկ թուով մարդերու առանձնաշնորհն էր տակաւին: Հոն, այս գալուցներուն մէջ էր որ գիրն ու գալուցութիւնը պիտի ծաղկէր: Իսրայելի կրթական առաջին դրամներն եղան անոնք: Գաբալայի (1), Ռամայի (2), եւ շատ հոգեւոր երիտօրի (3), Բեթելի (4), Գաղգաղայի (5), եւ ուրիշ գրողներ իսրայելի դաստիարակութեան զլխաւոր կեդրոնները եղան ապահովաբար կրօն եւ բարոյական, գիր եւ գրականութիւն. հոն, այդ «եկեղեցի»ներուն մէջ ծնունդ առին Իսրայելի համար: Սովորաբար վառվառն ու բարեպաշտ պատանիներ ամենքն ալ, այդ «մարգարէից որդիները», կը հաւաքուէին տարեց ու խոհական տեսանողի մը շուրջը, կ'ունենդէին անոր քարոզները, կ'ելեքորականային անոր պատգամներէն, անցելով փորձառութիւնն ու աւանդութիւնը կը սերտէին, քեղեցիկ սւլ յուսալից ապագայի մը փոխանցելու համար զանոնք:

ԴԵՈՐԴ-ՄԵՍՈՈՊ

«ՏԱՃԱՐ»Ի ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դեր. Տ. Բարգէն Սրբազան 1905-6ի Լոյս կրօնաթերթին մէջ մերթ ընդ մերթ հասուն պարզաբանութիւններ կուտար կրօնական զանազան չահագործող հարցերու

- (1) Ա. Թգ. Ժ. 5:
- (2) Ա. Թգ. ԺԺ. 19. 20.
- (3) Դ. Թգ. Բ. 5:
- (4) Դ. Թգ. Բ. 3:
- (5) Դ. Թգ. Դ. 38:

(1) Les prophètes Juifs, par Binet Sanglè. P. 324.

(2) Դ. Թգ. Բ. 11: Ա. Թգ. ԺԺ. 24: ԺԸ, 10:

վրայ, մենք ալ մերովսանն պիտի ջանանք երբեմն «Տաճար»ին այդ բացը լեցնել, վասն զի գաւառներէն ստէպ Ազգ. Պատրիարքարանին, եւ երբեմն ալ կրօնաթերթիս խմբագրութեան կողմէն նոյն տեսակ հարցումներու Այս անգամ առնենք նշանաթուութեան խնդիրը:

Ա. Երբ մանչուն եւ աղջկան նշանախօսութիւնը պաշտօնապէս օրհնուած չէ Առաջնորդարանի կողմէ, մանչուն բողոքին վրայ՝ նշանը օրինաւորապէս օրհնուածի պէս չի նկատուիր, եւ պէտք չէ աղջիկը յատենի կրօն. Ժողովոյ խօսեցնել, եւ ոչ՝ անոնց իրենց մէջ տուած նշանկապը, եւ ուրիշ առթիւ տրուած զարդուկները Ժողովոյ կողմէ ուշադրութեան առնել: Մասնաւոր կերպով նշանաւորութեան գործը ո՛չ կը ճանչցուի, ո՛չ իբր խնդիր կը քննուի եւ ոչ վճիռ կ'արձակուի, քանի որ պաշտօնական նշանախօսութիւն տեղի ունեցած չէ, այլ լոկ ընտանեկան շրջանակի մէջ կատարուած բան մըն է:

Բ. Երբ նշանը քահանայի ձեռամբ ալ տարուած է, իսկ Առաջնորդարանէ օրհնուած չէ, պաշտօնական չի նկատուիր, եւ եթէ աղջիկը յատենի կրօն. Ժողովոյ այսպիսի նշանածը չուզէ, իրաւունքի խնդիր յուշելու տեղի չի մնար, եւ ուրիշի մը հետ կրնայ նշանուիլ եւ պսակուիլ:

Գ. Երբ նշանը Առաջնորդի կամ անոր փոխանորդի հաւանութեամբ օրհնուած է, բայց անհամաձայնութեան մը, կամ հիւանդութեան մը եւ կամ ուրիշ ո՛րեւէ պատճառաւ նշանախօսութիւնը կը խզուի, նշանը ետ ընող կողմը պարտաւոր է նախ պաշտօնապէս նշանը քակել տալ. եւ միտնգամայն նշանն ու նուէրները վերադարձնել կամ վճարել, եւ յետոյ պաշտօնապէս կրնայ նշանուիլ ուրիշի հետ:

Դ. Երբ նշանը օրինաւորապէս օրհնուած չէ, միայն անպաշտօն կերպով նշանուած ըլլալը դիտնալ բաւական չի համարուիր նշանին պաշտօնական գոյն մը տալու համար:

Ե. Քանի որ պաշտօնական նշանախօսութիւն չէ ճիշտ, այլ եւս հարկ չի մնար

նշանը ետ ընող կողմը կրօն. Ժողովոյ հարցաքննութեան հետարկելու:

Ամէն պարագայի մէջ խոհական զգուշութեամբ պէտք է չարժիլ, նշաններու յաճախողէպ խղճան անպատեհութեան ալ դուռ չբանալու համար:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴ.

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Գ Ե Ղ Ե Ց Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅՐ ԿՈՄԻՏԵԱՍԻՆ

Վարդապետ,

Ցաւ է թնձ որ բազմ պիտի չունենամ Ձեր համերգը լսելու. բայց յունիս 5ի գիշերը ես ընդ Ձեզ պիտի ըլլամ սրտով:

Ունկնդրեցի ձեր կրկին դասախօսութեանց, որոնցմով ծանօթացուցիք մեզի սրբազան ու գեղջուկ հայ զուգեակ երաժշտութիւնները. քրիստոնեայ ու հեթանոս մեր քոյրերի փոքրեւոր ձայնական սրտաշարժ արուեստը, լսեցի Ձեր մեղադրանք երգեցողութիւնը զոր կատարեցիք ի ծուր տաճարին մէջ, բազկատարած խորանին առջեւ, լսեցի նաեւ Ձեր կայծակ բեմասացութիւնը որ միւս եւս երգ մըն է, լսեցի...

Հողիս դուն ուրեք վայելած է ար-

(1) Անցեալ շաբաթ կը գրէինք Թէ ո՛րքան փայլուն յաջողութիւն մ'ունեցաւ Կոմիտաս Վ.ի համերգը Աղեքսանդրիոյ մէջ: Մեծատաղանդ զրազէտ Տիգրան Կամսարական Եւրոպա մեկնելու առթիւ չկրնալով ներկայ գտնուիլ, Լուսաբեր-Արեւի մէջ հրատարակուած այս գրութիւնն ուղղած է հմուտ երաժշտագէտին: Կը հրատարակենք դայն, իբրեւ արդար և յուզեալ դնահատութիւն մը մեծ վարպետին, մանաւանդ իբրեւ զրական ամենաբազմազան վայելք մը, իբրեւ նմոյշ մը ազնիւ զրականութեան, ուր հայրենասիրական տաք զգացում մը կը մրցի արուեստի գեղեցկութեան հետ: Անցնենք Թէ այդ համերգին ջերմայ գտնուած է եզրպատահայտ Ս. Առաջնորդը՝ շրջապատուած քահանայից Դատով, մինչ Պոլսահայոց մէջ հազիւ մէկ քանի եկեղեցականներ համարձակեցան երթալ լսելու մեծ վարպետ և իր խումբը:

ուեստի ան ագնուական ու գերագոյն գրգանքը, Հայու ան խոր ու ազուոր յուշումը զոր ընծայեցիք զուր մեղի. «ձայնդ անսպառ» վարդապետ:

Ի՞նչ հրաշարուեստ յուշարար մըն էք Դուք նախնի ու արդի հայ դեղեցկութեանց. իրահաւատ սիրով, բոլորանուէր ջանքով հետադատեր, սրտներ, ի քնար վերակոչեր էք մեր քաղցրաղու, աստուածաշունչ մեղեդիներն ու օրհներգութիւնները, որոնց մէջէն մեր աուրբ նախնեաց հոգիները համբուրել տուիք մեզի Ասի սակայն չէ բաւեր ձեր արուեստագիտական ու հայրենասիրական վառ հետաքրքրութեան. հրճուած թիւ, գուրդուրալիք, զմայլանքով բաքախուն հայրենիքին թաթաքուր անկիւններէն, չկասկածուած փոշիթաթախ խորշերէն վերագտեր, յարուցեր, կենսաւետեր էք զուր ահա հայ գեղջուկ բանաստեղծութիւնը նաեւ, որուն սրտմոգիկ թլուստումը, կոյս գեղեցկութիւնը պաշտել տուիք մեզի, վարդապետ:

Յուշարար ըսի, բայց զուր վեղարաւոր չիջնօճ մըն էք աւելի. անցեալ գիշեր «Universit  Populaire»-ի սրահին մէջ երգելով ու բարբառելով, զուարճաբանելով երբեմն, այլ մի՛շտ յանկուցանելով Հայաստան ուխտագնացութեան տարիք զմեզ, կամ լաւ եւս է ըսել՝ քիչ մը Հայաստան ըրիք Եգիպտոսի հայերուս. մենք կը կարծէինք թէ հայ կրօնաւորը որ էջմիածնէն կուգայ՝ միւռոն միայն կը բերէ, զուր Մատթն ու Արագածը փոխադրեցիք հոս սկսի մը. ո՞վ ըսաւ որ լեռները չեն քալեր . . .

Բարձրացանք ձեզի հետ ցից կառարը մեր հայրենիքի լեռներուն, որոնք չորս հազար տարի է հայութիւնը «կը դիտեն» Իջանք ապա միասին սա ծաղկազուարճ մարդարօտները սրտնք Հայոց գաշախն են. լսեցինք հոն, յակճիւ, հայ շինական մեր ազբրտաց ազու ու մերթ գո՛ւ ձայնը որ կ'երգէ, կը հրճուի, կը ցնծայ. ի՞նչ, վարդապետ, իրա՞ւ է արգեօք, Հայաստանի Հա՛յն ալ ցնծութեան ճիչեր, ուրախութեան

աղաղակնե՞ր ունի եղեր, մեր հէգ սիրական եղբայրը. չէինք գիտեր ատիկա, անալիկալը փղձկեցուց զմեզ . . .

Մենէ ո՞վ պիտի կրնայ մոռնալ երբէք հայրենիքի հողեզուարճ ան տեսարանները, զոր խօսքով ու երգով հետապորդեցիք մեր զմայլած աչքերուն առջեւ. վառելի ձեր երգը, վարդապետ, նկարչութիւն մըն է կատարաւ, գոյն ու պէս պիտութիւն ունի, խորութիւն ու մթնոլորտ ունի, — երկրին մթնոլորտը —, լոյս ու ստուերներ ունի. Հայաստանը մեր լսելեօքը . . . տեսանք մենք:

Երբ զուր եկաք վերյուշիլ մեզի ու վերյայանիլ սիրալի ու հարազատ սա հայ գեղեցկութիւնները՝ զորմէ անուր էինք մենք ի բնէ, չփոթում մը ունեցանք. մի գուցէ — ցայնվայր անհաղորդ հայրենի աջգն անուշակ թրթուռներուն — մենք տարաշխարհիկ հայեր՝ թերի, անկատար հայեր եղած ըլլայինք. բայց ինչո՞ւ համար ան առեւ մեր սրտերը իրենց խոր խաւերուն մէջ այդ սաստկութեամբ զղրէին ի լուր ձեր «կռուկին», «Մոկաց իշխան»ին ու «Միփանայ քաջերուն . . .»

Ո՞վ վարպետ վարդապետ, ի՞նչ բանի տեղի հիանամ ձեր մէջ. ձեր սրտեւստուրը ձայնի՞ն (յոդեղալի՞ ինչպէս յիշեցիք կորիւնէն), թէ գերանորր սրտեւստին, պատարոն դիտութեան թէ բոցոյշեշտ պիտախօսութեան. հրապուրիչ բանախօսին թէ . . . բայց զուր վհուկ մըն էք, հայր սուրբ:

Ներկայ էի ձեր համերգի փորձերուն, որպէս զի գոնէ մասամբ ճաշակ մը ստանամ անկէ. ձայնի ճարտարապետութեան հայկական զուտ հրաշակերտ մըն է ատիկա. Ձեր այդ համերգին մէջ Հայու հոգին է որ փոխ ի փոխ կ'աղօթէ ու կը սիրէ, կը հեծէ ու կը շանթէ, — ինքզինքը կը պատմէ, ի՞նչ միածոյ հագնեցութիւն ու համատարած ներգաշխակութիւն, գարբրային ի՞նչ վեհութիւն, նաեւ հեթանոս ի՞նչ հեշտանք. ի՞նչ գունդեղութիւն, ձեւազանութիւն, զգացման թարմութիւն ու խորութիւն, բայց մոռնուանդ քնաշխարհիկ ի՞նչ չեղաւ, ի՞նչ համ

ու ինչ քաղցրածուր ներշնչում զոր դուք այնքան արուեստահիւսեր, ընդելուզեր էք արեւմտեան գիտուն ու կարի դժուարաբանաճ երաժշտութեան հետ. եւ ի՞նչ Հայ քնարը ձեր բարեյարգար արուեստին շնորհիւ այգբան բնական փարուսով մը խնամեցած է Եւրոպականին հետ, ստի ապացոյց մը չէ՞ թէ հայ մաքին ծիրը ռփքան հեշտ ու վայելուչ առաջատար թեամբ դէպի արեւմտեանը կը դիմէ ու կը ձգի. ձեր համերգը՝ այդու՝ «հաւատամք» մըն է, հայր սուրբ, հայ ցեղին բարձրագոյն ընդունակութեանց ու անոր անհուն կատարելականութեան:

Դուք, վարդապետ, փոքրիկ հրաշքի մը առիթ տաւիք մեր մէջ. հարկւր յիսուն ու աւելի մանկտիք որոնք դեռ երկ կ ստեղծարարին առաջին խաչն իսկ անկարող էին արտաբերելու, կ'երգէին՝ կոր հիմա «խրբեւ զգասս սերովբէից» հայրենիքն է որ բաբախեց անոնց սրտին գողար խորշերուն մէջ. առհաւութեան սքանչելիք մըն է այս. ո՞վ պիտի ըսէր թէ այգբան ներգաշնակութիւն կար պահուրած այս մտղուկ կոկորդիներուն մէջ, Բայց ձեր շունչովը, հայր սուրբ, ուրիշ հրաշք մըն ալ կատարուեցաւ այստեղ. տեսէք թէ ինչպէս. ձեր համերգին մէջ միայն մանկտիք չեն երգեր. մանկանց ճիշդ քովը եւ մեր «աղերքն» ալ տեսայ. այդ աղերքը մինչեւ երէկ «սկզբունքային հարցերու» տարածաշնութեամբ՝ աղբին ՍԷՐԸ . . . ատելութեան մէջ փնտուել թուեցան. այսօր ձեր ճպտոն հզօրքովը, — ձեր սրինգին թովչութեամբը պիտի ըսէի — խաղաղած, «ի ցառմանէ ցածուցեալ» ինչպէս պիտի սիրէիք ըսել դուք թերեւ, առաջին անգամ, տեղն է ըսել «զառաջինն նուազ» քով քովի, կամ իրենց լեզուովը՝ «կողք կողքի, կուշա կուշտի» կ'երգեն կոր անա միաբերան ու ներգաշնակ Օրհնեցէք այս երաժշտանոր՝ զինադուլը, հայր սուրբ. հայ միաբանութեան առաջին յայտնութիւնն է ասիկա՝ զոր ձեզի կը պարտինք: Ժողովրդային առածը կ'ըսէ. «խօսքով գործ չըլլար»՝ ճշմարիտ է ասիկա, բայց դուք նոյն իսկ երգով գործ կը կատարէք:

չըսի՝ ձեզի թէ վհուկ մըն էք . . .

Սակայն դուք տաւիղ մըն էք մանաւանդ, որուն վրայ հայուն զարաւոր այլ յարանորոգ հոգին իր խորախորհուրդ թրթռումները կը չարունակէ արատայայտել անա. «բնտրեալ» մըն էք դուք որեմն, զե՛ր քան զբանայ. մի գուցէ քիչ մը խրոխտալ փորձուէիք ստոր համար. մեղանչած կ'ըլլայիք. քնարը զոր կը կրէք ձերինը չէ բոլորովին. Դողթան երգիչներէն մեր ցեղին յանձնուած նուիրական աւանդ մըն է ան, զոր բաղդին բարութեամբ ձեզի վիճակուեր է պահել ու պահպանել. ընտրելագոյն ձեռաց մէջ է. եւ ձեզ անկ է խնամոտարար, երկիւղածօրէն հսկել անոր վրայ, — աղբային ըստացուածք մը, հայկական սեփականութիւն մըն է անիկա:

Այդ սրբազնեալ աւանդն ի ձեռքն դացէք, հայր սուրբ, անդաստան կատարել ի Հայս համօրէն, գացէք հնչեցնելու ձեր քնարը ի լուր տարանջառ հայութեան որ «Աւարայրի պուլպուլ»էն մինչեւ հիմա Ալիշանով միայն խապրիկ առած էր: Այդ պուլպուլը մեր արմաւենիներուն վրայ թառեր է հիմայ:

Տեսէք, վարդապետ, ձեր գեղգեղանքով հայրենասիրական ինչ հեշտալի եւ սուգեւ մը դրիք մեր տակաւ հեղգացած հոգիներուն մէջ. քեզմով հայրենիքի քանի մը աղամանդիկ շաքաթներ ապրեցանք հոս. դուք, Հայր սուրբ, Հայաստանով «հաղորդ»եցիք զմեզ ամենա:

Տասն եւ չորս գար առաջ ձեր հոգեւոր բաղմերախա ու պանծալի եղբայրները՝ Եղիշէն ու Խորենացին, Եզնիկն ու Կորիւնը եւ այլք ընկերք «յարատեւողք իմաստութեանց», պատմագրին իսկ խօսքով, Աղեքսանդրիա եկան, եւ դուք անոնց պէս. ուղեղծի այս նոյնութեան մէջ բարեկուշակ նշան մը, շառաւիղ մը տեսնեմ եւ արդեօք. քնարերգիցին անոնք «զփառըս Հայոց աշխարհին», եղերերգեցին, երգեցին. շարունակեցէք, վարդապետ, ու գացէք, այո, ձեր ոսկեհունչ ձայնով հայ թանկարժէք գեղեցկութեանց աւետիսը տալ ի սփիւռս Հայութեան, որուն հայրեն-

նասիրութեան կրօնքը պիտի գերադարձէք զուրք. հայը որ կը լսէ զձեզ, իր ազգովը հպարտանալու իրաւունք մը կը ստանայ կարծես. հայրենիքին մեծ մուսնետիկն էք զուրք:

Եւ եթէ օր մը գեղգեղելէ ու հմայելէ, յուզելէ ու յուզուելէ պահ մը հանգչելու համար հայրենիքի կենսանորոգ կազմոյրը երթաք փնտոելու, ձեզի երկու աղաչանք ունիմ, վարդապետ. նախ՝ մեր կողմանէ յարգական յուզեալ խոնարհութիւն մը՝ ձեր նախակարապետներէն երանելի Նրեմիա երաժշտին շիրիմին առջեւ. որ հազար երկու տարիէ ի վեր, Արադածի կողմը, անեղծ ու անվթար պահուած է ըսիք մեզի զուսպ խանդաղատանքով մը, եւ յետոյ՝ օհ, մանաւանդ՝ երբ «արփույն յառաջածագ նշոյլով» տրուի ձեզ բարձրանալ անդրէն այն լեռը որ հայութեան ծագմանը նախագահեց՝ անոր վրայ «Յիշեալի՛ր եւ զմեզ», Հայր սուրբ, ու լանջքերնիդ Արարատի ծաղկանց բոյրովն ու շունչովը առլցուն, արձակեցէք հոն ձեր սա չքեղ ուժգնազօր ձայնը «յազատն ի վեր ի Մասիս»։ հեռաստանի արմատախիլ հայերէս առ հայրենիք մեր կարօտոյ որդիական ողջոյնը թող ըլլայ ատիկա:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

«ՏԱՃԱՐ»Ի ԹԵՐԹՅՈՆԸ

Երկար ատենէ ի վեր փափաք ունէինք Թերթոնի բաժին մը բանալու, որ ընթերցողը պարկեշտ հետաքրքրութեան մը մէջ պահելով հանդերձ, նպաստէր անոր բարոյական զարգացումին: Իր կրօնաթերթի հանգամանքով Յաւար քնական է որ չպիտի ուզէր հրատարակել բոլորովին աշխարհիկ կամ Թոյն-դաշոյնական վէպեր: Իր ընտրութիւնները պիտի ըլլան ուրեմն այնպիսի գործերէ, որոնք՝ ընկերային—քննական կեանքի հաւաքաւոր պատկերացումներ ըլլալով հանդերձ, ազնիւ, ու բարոյացուցիչ նպատակ մը, եւ գրական անժխտելի արժէք մը ունին միեւնոյն ատեն: Կը սկսինք ուրեմն Ռուս աշխարհագրական գրագէտին՝ ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅԻ գեղեցիկ մէկ պատմութեամբովը, որ սրտաւոյդ տեսարանները չէ որ կը պակսին, եւ ուր կը պարզուի միեւնոյն ատեն հանճարեղ հեղինակին իմաստասիրական հայեացքը՝ Աւետարանի ոգւոյն

եւ ընկերային բարոյականին վրայ:
Այդ գործն է՝

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մ Ո Ւ Տ Ի

Ք . . . քաղաքին մեծահարուստ վաճառականներէ մէկուն տունը, իրիկուն մը բազմաթիւ բարեկամներ հաւաքուած էին: Խօսակցութիւնը հետզհետէ լուրջ դարձուածք մը առաւ, եւ վերջապէս վիճարկութեան առարկայ եղաւ մարդկային ճակատագրի կարեւոր հարցը՝ Ներկաներէ իւրաքանչիւրին, ինչպէս նաեւ բացակայ լուրեկամներու կեանքը երկար քննութեան մը ենթարկուեցաւ, եւ եզրակացութիւնը այն եղաւ որ անոնց կեանքէն ոչ մէկը արժիւ չէր արժեր: Ասիկա ըսել չէ որ իրենցմէ ուր մէկը բախտէն դժգոհելու պատճառ ունեցած էր, բայց ամէնքն ալ հարկադրուած էին խոստովանիլ թէ չառ թիկեւ, անձնասէր, եւ Քրիստոնեայի մը ոչ այնքան արժանի կեանք մը կը վարէին: Այս եղաւ իւրեց քննութեան արդիւնքը, եւ բոլորն ալ միաձայն խոստովանեցան իրենց յանցանոր ըլլալը:

— Ինչո՞ւ ուրեմն, կը շարունակենք այնպիսի կեանք մը վարել զոր կ'այպանենք բարձրագոյն, ըսաւ կրիստոսաբոլ մը որ մասնակցած էր վիճարկութեան: Այստեղ չէր լսուողոյն ճամբայ մը ընտրելու: Ամէնքս ալ համոմատաբար կը հաստատենք թէ մեր հարստութիւնը, մեր կնաքարոյ մեղկութիւնը, մեր պերճանքը, մեր անախառնութիւնը պատճառ կ'ըլլան որ մենք մեղուսացած արդիւնք մեր նմաններուն մէջ, եւ մեր հոգիին կորուստը յառաջ կը բերեն: Փաստասիրական մտահոգութիւններ զմեզ կ'ատմանորդեն մեծ քաղաքները ուր կը խլղաւին, ուր մեր անողջութիւնը կը խանգարուի, ուր դիւրապէր ջղայնութիւն մը կը ստանանք, եւ հակառակ ամէն տեսակ վայելքներու եւ զբօսանքներու, ոչ մէկ բան զոհաբերու

կը պատճառէ մեղիւ Զանգրոյթէ կը մեռնինք, ներքնապէս վրդովուելով լաւագոյն կեանքի մը ձգտումէն: Ի՞նչ պէտք կայ շարունակելու այսպիսի գոյութիւն մը: Իմ մասին, կը հրաժարիմ այս տեսակ կեանքէ մը: Կիսաւարտ պիտի թողում իմ ուսումս, որ այն ամեն միայն պիտի կրնար օգտակար ըլլալ ինձ, երբ ուզէի յարստեւել դէշ ճամբուն մէջ. պիտի թողում բոլոր հարստութիւնս, եւ պիտի երթամ ապրիլ գիւղերը, խոնարհ մարդոց մէջ: Երկիրը պիտի մշակեմ անոնց պէս, եւ զանոնք պիտի նպաստաւորեմ իմ ձեռք բերած ծանօթութիւններովս, եթէ ատիկա օգտակար կրնայ ըլլալ իրենց: Այո՛, հաստատապէս որոշած եմ, եզրակացուց երիտասարդը, նախուսձք մը ձգելով իւր հօրը վրայ, որ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր իրեն:

— Իրաւ է որ այդ որսչումդ ազնիւ զգացումներէ ներշնչուած է, պատասխանեց այս վերջինը. բայց միեւնոյն ատեն կը ցուցնէ թէ ո՛րքան քիչ փորձառութիւն ունիս կեանքի: Մարդկային գոյութեան մէջ տակաւին զփութարութեան հանդիպած չըլլալով, ամէն բան քեզի դիւրաւ գործադրելի կը թուի: Ի՞նչ պիտի ըլլար աշխարհ, եթէ ամէն ոք ուզէր մարդկութիւնը բարեկարգելու գործին խառնուիլ: Մեր ընկերային կեանքը շատ կնճռոտ է. արդէն շատ գիւրին գարձ մը չէ կոխուած ճամբաներէ ընթանալ. եւ մարդ շատ աւելի գփութարութիւններու կ'ենթարկուի երբ կ'ուզէ նոր ճամբաներ բանալ: Այդպիսի աշխատութիւն մը անոնք միայն կրնան ստանձնել, որոնք կեանքի երկարատեւ գոյութեան մը միջոցին կարողացած են ձեռք բերել այն բոլոր փորձառութիւնն եւ իմաստութիւնը զոր կեանքը կրնայ տալ Դուռն տակաւին չա՛տ երիտասարդ. ես եւ, հաւատա՛ ինձի, չես կրնար ստանձնել այդպիսի պատասխանատուութիւն մը: Մտիկ ըրէ՛ հասուն մարդոց խորհուրդներուն, որոնց պարտականութիւնն է չափաւորել երիտասարդներու կրակոտ եռանդը: Դուռն մեծնալու վրայ ես տակաւին, եւ առ այժմ ուրիշ

մասնում պէտք չէ ունենոս, եթէ ոչ քու մարմնիդ եւ իմացականութեանդ տալ հնար եղածին չափ մեծ ուժ եւ զարգացում: Անկէ՛ վերջը պիտի մտածես անձնական կարծիքներ ունենալ այս կամ այն իրողութեան վրայ. եւ վերջապէս, աւելի՛ ետքը, կրնաս ընտրել ապրելու այն եղանակը զոր նկարագրեցիր մեզի, եթէ սակայն ատոր մէջ ուժ զգաս ներքնապէս. հիմակուհիմա բաւականացիր հնազանդելով այն անձերուն որոնք քու իսկ օգտիգ համար խրատներ կուտան քեզի. որովհետեւ տակաւին զուն չես կրնար փոխել մարդկութիւնը:

Երիտասարդը չպատասխանեց. բոլոր ներկաները համամիտ գտնուեցան անոր հօրը:

— Բացարձակապէս իրաւունք ունիք, պատասխանեց տարիքը առած մարդ մը որ ամուսնացած էր: Ծննդաբիւ է որ մեր երիտաւարդ պարոնը մոլորելու վտանգին պիտի ենթարկուէր, եթէ կարենար իրագործել իր ըսածը. արդէն իր որոշումներն անխախտ չեն կրնար նկատուիլ այս վայրկենին: Բայց նոյնքան ճշմարիտ է որ մեր գոյութեան պայմանները չեն կրնար դուրս հանել զմեզ: Հետեւապէս պարտաւոր ենք ուրիշ բան մը փնտռել: Ուշադրութեամբ հետեւեցայ քիչ առաջ կատարուած վիճարանութեան. այս երիտասարդին յայտնած գաղափարը իմ ալ ուշադրութիւնս գրաւած էր: Ինքնիրենս կը խոստովանէի թէ այն կեանքը զոր այժմ կը վարեմ, ո՛չ երջանկութիւն կը հայկայիմէ ինծի, ոչ ալ խղճի հանդարտութիւն: Ինչո՞ւ: Ի՞նչ բան կը պակսի ինծի: Աւելի ի՞նչ բան կրնամ յուսալ: Զգիտեմ: Սա միայն գիտեմ որ տուտուրնէ մինչեւ իրիկուն կ'աշխատեմ, մի՛ միայն իմ ընտանիքիս համար, այսինքն իբրեւ անձնասէր մէկը, եւ թէ հետեւապէս անհամաձայն եմ աստուածային կամքին: Ո՛րչափ յառաջանամ, ա՛յնքան կը խորատուգոյիմ մեզքի մէջ: Եւ ընտանիքը իբրեւ կ'օգտուի՛ այս ճիգերէն որ կը հակառեմ քրիստոնէական օրէնքին: Անչո՛ւ չտ ոչ որովհետեւ չարիքէն իրական բարիք չի ծնիր

բնաւ Ուստի յաճախ ինքնիրենս կը հար-
ցնեմ թէ արդեօք լաւագոյն չպիտի ըլլայ
բոլորովին փոխել իմ ապրելու եղանակս,
եւ գործնականին մէջ կիրարկել մեր երի-
տասարդ բարեկամին այնքան գեղեցիկ
կերպով պարզած գաղափարները, այսինքն
բնաւ չզբաղիլ իմ կնոջմովս եւ զաւակ-
ներովս, եւ միմիայն իմ հոգիս փրկու-
թիւնը փնտռել։ Առանց իրաւունքի չէր
որ Ս. Պօղոս Առաքեալ բռնած է. «Ով որ
ամուսնացած է, այս աշխարհի իրերովը
կը զբաղի. իսկ ով որ ամուսնացած չէ,
Աստուծոյ վերաբերեալ բաներով կը զբա-
ղի, եւ կը ֆանայ հաճելի ըլլալ Աստու-
ծոյ»։

Այս խօսքերն ըսողը հաշիւ թէ վեր-
ջացուցած էր, եւ ահա բոլոր կիները, եւ
մանաւորապէս իր կինը, զայրալից չեշ-
տով մը բողբոջեցին։

— Շատ աւելի կանուխ պէտք է
մտածած ըլլայիք ատիկայ, ըսաւ ծեր կին
մը։ Իրաւ որ սիրուն բան մը պիտի ըլլար,
եթէ բոլոր այրերը, իրենց հոգին փրկե-
լու պատրուակին տակ, լքանէին իրենց
կիներն ու զաւակները։ Պարզապէս յի-
մարութիւն եւ վատութիւն պիտի ըլլար։
Մարդ պարտաւոր է պատուաւոր կեանք
մը վարել իր ընտանեաց ծոցին մէջ։
Իրաւ որ զարմանալի արժանիք մը պիտի
ըլլար մարդու՝ մի միայն իր փրկութեան
վրայ խորհիլ։ Եւ արդէն Գրիստոսի վար-
դապետութեան բոլորովին հակառակ է
պաշտ. Աստուած կը հրամայէ մեզի մէկզմէկ
սիրել. ու մենք պիտի մնասինք մէք ամե-
նէն մերձաւորին, Աստուծոյ հաճելի ըլլա-
լու համար . . . ։ Ճշմարտութիւնն այն
է որ մարդ չստ որոշ պարտականութիւն-
ներ ունի կատարելիք, զոր անտեսել նե-
րելի չէ։ Բնաւ Նրբ իր զաւակները մեծ-
ցած եւ գիրք մը գրաւած են, այն ատեն
ազատ է ուզածին պէս վարուելու. բայց
մինչեւ այն ատեն պէտք չէ որ իրեննե-
րուն մնասելու հանգամանք ունեցող ո
եւ է բան մը ընէ։

Ընտանիքի հայրը, որ այնքան բուռն
քննադատութեան մը տառակոյ եղած էր,
ինքզինքը յաղթուած չնկատեց։

— Դիտում չունիմ ընտանիքս լքա-
նելու, պատասխանեց։ Կ'ըսեմ միայն թէ
պէտք չէ զանոնք կրթեմ աշխարհիկ դա-
ղափարներով, թէ պէտք է աշխատանքի
եւ զրկանքի վարժեցնեմ իմ զաւակներս,
անոնց ներշնչեմ զթուրթեան եւ եղ-
բայրսիրութեան զգացումները՝ իրենց
նմաններուն հանգէպ։ Այս նպատակին
հասնելու համար, ուրեմն, պէտք է հրա-
ժարիլ աշխարհային փառքերէ եւ հարս-
տութենէ։

Իր կինն անմիջապէս խօսք տուաւ՝ յուզ-
ուած։

— Բայարձակապէս անհեթեթ բան է
այդ տեսակ խօսք մը, ըսաւ անոր. դուք
կ'ուզէք ուրիշները մղել այնպիսի կեն-
ցազի մը, որմէ ամենէն աւելի դո՛ւք հե-
ռու կը գտնուիք։ Դուք ամէն ատեն հա-
րստութեան եւ ներձանքի մէջ ապրած
էք, եւ կ'ուզէք ձեր կինն ու զաւակները
տառապեցնել կեանքի տարապայման
պարզութիւնով մը։ Հիմակուհիմա պէտք
է հանգիստ ձգել զանոնք, ժամանակ անց-
նելէ ետքը անոնցմէ իւրաքանչիւրը պիտի
ընտրէ կեանքի այն եղանակը որ լաւա-
գոյն կերպով կը յարմարի իրեն, բայց
չէք կրնար հարկադրել զանոնք ձեր քմա-
հաճոյքին համեմատ ապրելու։

Ընտանիքի հայրը չպատասխանեց .
բայց ծերունի մը որ անոր քով նստած
էր, խօսք առաւ իր կարգին։

— Իրաւ է որ, ըսաւ, ամուսնացած
մարդ մը, որուն ընտանիքը վարժուած է
հանգստաւէտ կեանքի մը, պէտք չէ յան-
կարծ զրկէ զայն իր վայելած բոլոր առա-
ւելութիւններէն։ Նոյնպէս արդար եւ
տրամաբանական չպիտի ըլլար, եթէ այդ-
քան արմատական փոփոխում մ'ընէր իր
զաւակներուն տուած դաստիարակու-
թեան մէջ, մանաւանդ թէ ասանք ազատ են
ի վերջոյ ընտրելու բոլորովին տարբեր
ճամբայ մը. իմ կարծիքս այն է որ այս
ամենուն իրականացումը չստ գծուար
պիտի ըլլար, նոյն իսկ յանցապարտ բան
մը։ Բայց խնդիրը բոլորովին կը տարբերի
մեզի՝ ծերերուս համար, որոնց՝ կրնանք
ըսել թէ՝ նոյն իսկ Աստուած հրամայած է

այդպէս ընելու ես ինքզինքիս համար միայն կ'ապրեմ։ Կրնամ նոյն իսկ ըսել թէ մի միայն իմ ստամոքսիս համար կ'ապրեմ։ Կ'ուտեմ, կը խմեմ, կը քնանամ, եւ ամէնը առ է։ Արդ, ես ձանձրացած, գանաձեմ եմ այս անձնասէր եւ անօգուտ գոյութենէն։ Ժամանակն եկած է լքելու այդ կեանքը, ցրուելու իմ ունեցածներս, եւ հիմա որ կեանքիս արեւամուտին հասած եմ, ապրելու աստուածային օրէնքին եւ քրիստոնէական վարդապետութեան համաձայն։

Այս ծերունին ալ երիտասարդէն եւ ամուսնացած մարդէն աւելի հաւանութեան չարժանացաւ։ Իր զաւակը, մայրը, եւ եղբորդուստրը, որ նոյն հաւաքոյթին մէջ կը գանուէին, բոլորն խօսքերով հաւատակեցան իրեն։

— Ո՛հ, ո՛հ, ըսաւ իր զաւակը, ասիկայ արդար չէ։ Ժամանակաւ շատ աշխատած էք դուք, բնական է թէ հիմա պէտք է հանգչիք։ Ասկէ զատ, վաթսուէն տարի շարունակ ձեր ճաշակին համեմատ ապրելէ, եւ կարգ մը սովորութիւններ ստանալէ ետքը, այսօր չպիտի կրնաք այս ամէնը փոփոխել։ Այդպիսի փորձ մը ձեզի ամէն կարգի նեղութիւններ եւ ձանձրոյթ միայն պիտի պատճառէր։

— Բնականաբար, ըսաւ իր եղբորդուստրը, զրկանքները տառապանք եւ վիշտ պիտի պատճառեն ձեզի, հառաչանքներ խլելով ձեր կուրծքէն, եւ առիթ ընծայելով ցարդ ձեր ունեցածէն շատ աւելի մեղքերու մէջ ինջալու։ Բարի եւ գթած է Աստուած, կը ներէ բոլոր մեղաւորներուն, սկսելով ձեզմէ, իմ սիրելի՛ հօրեղբայրս։

— Անշուշտ, յարեց ուրիշ ծերուկ մը, ի՞նչ հարկ վրդովել մեր ուղեղը այսպիսի մտածումներով, գուք եւ ես, աւելցուց՝ խօսքն ուղղելով իր տարակիցին, թերեւս երկու օրէն աւելի չունինք ապրելու։ Ո՛րքան անասի եւ յիմարական պիտի ըլլար այդ կարճատեւ օրերն ալ անցընել ծրագրերն եւ յատակագրիճեր պատրաստելով։

— Ո՛րքան տարօրինակ եւ արտասո-

վոր լին, ըսաւ եղբակացնելով հրաւիրեալ մը որ տակաւին բերանը բացած չէր։ Ամէնքս ալ համամտաբար յայտարարեցինք թէ մենք մեր հոգիներուն եւ մեր մարմիններուն համար հաւասարապէս մահացու կեանք մը կը վարենք, եւ պէտք է որ առիւտ փոխենք։ Բայց ի վերջոյ, երբ որ պէտք եղաւ այս մասին գործնական որոշում մը տալ, մենք հաճուում դոյացուցինք թէ այս դադախարը չէր կրնար կիրարկուիլ ո՛չ երիտասարդներուն, ոչ ամուսնացած մարդոց եւ ոչ ալ ծերունիներուն համար։ Այս ամէնէն սա կարելի է հետեւցնել թէ ոչ ոք կրնայ ձգտիլ իրապէս կատարելալ, բացարձակապէս ուղղամիտ, եւ կատարելապէս իմաստուն ըլլալու, եւ թէ մեզի տրուած միակ միախառնութիւնն այն է որ կրնանք ուղածուս չափ վիճաբանիլ այս բոլոր խնդիրներուն վրայ։

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

Շարունակելի

ՏԵՐՈՒՆԻ

Տխրութեամբ կը ծանուցանենք մահը ՎՍԵՄ. ԱՌԱՔԵԼ ՊԷՅ ՏՍՏԵԱՆԻ, որ տեղի ունեցաւ անցեալ չարթու։ Հանգուցեալը, երէց զաւակ Պօլոս պէյի, նահապետն էր Տատեանց բարեհամբաւ դերձաստանին, եւ իր բազմաթիւ բարերարութիւններով նախախնամութիւն մը եղած էր Այ-Սթէֆանոսի մէջ, ուր իր բարեսիրութեան գիւնդներէն ոչ ոք ձեռնունայն ետ կը դառնար։ Մեր խորին վշտակցութիւնը կը յայտնենք հանգուցելոյն հարազատին՝ Վսեմ. Յովհաննէս պէյի, եւ համայն պարագաներուն։

Վսեմ. Խաչիկ էֆ. Խորասանճեան դուռն փխտն ունեցաւ կորսնցնելու իր զաւակը՝ ՕՆՆԻԿ Էֆ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ, յուսալից երիտասարդ մը, օժտուած ազնիւ ձեռքերով եւ զարգացումով։ Այս կսկծալի մահը խորունկ վիշտերով կը համակէ Խորասանճեան գերդաստանին բազմաթիւ համակիրները։ Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Գշ. օրը Բերայի Ս. Ներսիս դուռեան եկեղեցիին մէջ խորն բազմութեան ներկայութեամբ։ Արտի անկեղծ վշտակցութեամբ երկնային միախառնութիւն կը հայցենք ծողկատի հանգուցելոյն վշտակիր ծնողաց եւ բոլոր պարագաներուն։

ՇԻՐՎԱՆՁԱՏԷԻ ԴԻՐՔԸ
ՌՈՒՍԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Մ Է Զ(1)

Շիրվանդատէի գրական գործունէութեան երեսնամեակը մեր հասարակութեան լայն խաւերուն և հայաբնակ շատ հեռու անկիւններու մէջ իսկ այնպիսի արձագանգ գտաւ, որու նմանը մեր պատմութիւնը դեռ չէ արձանագրած իր էջերուն մէջ: Իւրաքանչիւր քիչ թէ շատ զարգացեալ հայկական անկիւններու մէջ տօնական հանդէսներ կազմակերպեցին, շատերը մասնակցեցան նիւթական հուշարարութեամբ: հրատարակեցին յատուկ հատորներ նուիրուած անոր գրական կերպարանքի գնահատման: դեռ կը շարունակուին տպագրուիլ բազմաթիւ յօդուածներ պարբերական մամուլի մէջ: Մինչև անգամ թրքահայ գրողներ բարեհաճեցան ցած քալ իրենց ոլիմպիական բարձունքէն և իրենց քաղցր ուշադրութեան արժանացնել մեր «նորհադուրի թէն», բայց առողջ գրականութեան՝ այս ներկայացուցչի գործերը, անոնց քննադատութեան յատուկ հատոր մը նուիրելով: Երեւան բերուած կարծիքներու մէջ քիչ չեն նաեւ իրարու հակասող, իրար ջնջող հակազդիւ տեսակէտներ, բան մը որ ան-

խուսափելի է ոչ միայն իւրաքանչիւր գրողի վերաբերմամբ առհասարակ, այլ նամանաւանդ մի ժամանակակցի: Գուցէ աւելորդ չէր ըլլար Շիրվանդատէի վրայ հայեացք մը ձգել դրական-պատմական տեսակէտէ, առանց անոր երկերու վերլուծութեան մէջ մտնելու: որոշել անոր տեղը մեր գրականութեան մէջ իբրեւ գեղարուեստական գրողի ընդհանրապէս և իբրեւ վիպագրողի մասնաւորապէս:

Ա.

Որպէս զի կարողանանք որոշել, թէ ինչ ըրաւ Շիրվանդատէն հայ վիպագրութեան համար, հայ վէպի զարգացման շղթային ինչ աւելցուց, անհրաժեշտ է ծանօթանալ հայ վիպագրութեան վիճակին մինչև Շիրվանդատէն, տեսնել թէ անոր նախորդ վիպասանները ինչ վերաբերմունք ցոյց տուած էին դէպի բանաստեղծութեան այդ ճիւղը:

Շիրվանդատէի նախորդներն են ուստի հայ վիպագրութեան մէջ խաչատուր Աբովեան, Պերճ Պռօշեան, Ղազարոս Աղայեան, Սփրատ Երազմիկեան և Բաֆֆի: Համառօտակի, որքան կարող է թոյլատրել լրագրական յօդուածի ծաւալը, փորձենք ուրուագծել ասոնցմէ իւրաքանչիւրի հայ վէպի մէջ մտցուցած տւանձնայածուկ գիծը:

Մեր նորագոյն գրականութեան առաջին վիպական գործը, որու երեւան գալիքը արագ ընկալեց մը կազմեց՝ այդ ասպարէզին մէջ, և որ երկար ժամանակով նախորդեց մեր վիպագրութեան ուղղութիւնը, Աբովեանի «Վէրք Հայաստանին» էր: Մեր մէջ սովորութիւն է դարձեր այդ գործը վէպ կոչել: Ճիշտ է որ նա կը պատկանի բանաստեղծութեան այդ ճիւղին, բայց անոր վէպ անունը տալ, այդ բառի ժամանակակից իմաստով, մենք չենք կարող: Նոյն իսկ բանաստեղծութեան այդ ճիւղի մէջ յայտնի բոլոր միւս անունները՝ դիւցազներգութիւն, վիպակ, նորավէպ և այլն, չենք կարող կիրարկել այդ գրուածքին: Եւ ատիկա պատահական հանգամանք մը չէ. ատիկա արդիւնք է այն պայմաններուն որոնց մէջ հրապարակ եկաւ այդ

(1) Շիրվանդատէի Յոբելեանը առիթ եղաւ շատ միաժամանակ երեւոյթի մը: Գրական վաստակաւորի մը արժանիքը խօսքով ու գործով դնու հատուած տեսանք աշխարհի ամէն կողմերէն ուր որ Հայ կայ, Ամերիկայէն մինչև Եգիպտոս ու Եւրոպա, ուր բազմաթիւ քաղաքներու մէջ հանդէսներ կազմակերպուեցան մեծաաղանդ Յոբելեանին ի պատիւ: և շնորհաւորական հեռագիրներ տեղացին Յոբելեանին: օրը: Այդ շնորհաւորականներէն՝ ի մէջ այլոց նշանակելի էր Ս. Էջմիածնի Առթող. տեղակալ Սուրենեանց Ս. Գեորգ Արքեպիսկոպոսի օրհնութեան գիրը որ կարդացուեցաւ յոբելեանի հանդէսին օրը: Այս առթիւ հաճոյքով կը հրատարակենք ներկայ հիւժեղ ուսումնասիրութիւնը, ուր Շիրվանդատէն և իր գործը ամփոփ կերպով ծոնօծացուելու առթիւ, յետահայաց լուրջ ակնարկ մը կը ձգուի Թուսահայ վիպողներու փայլուն շարքին, և անոնց որոշ ու ազնիւ զաղափարականին վրայ:

երկը, եւր իր ժամանակի հայութեան ամենազարգացած մարգոցմէ մէկը, օժտուած մի հսկայական սրտով, որ լեցուն էր հրաբուրդը զգացմունքներով եւ վառ հայրենասիրութեամբ, բանաստեղծական կրակոտ ոգի, միեւնոյն ժամանակ ոչ անտարբեր՝ զէպի իր ժամանակի բազմաթիւ հասարակական եւ քաղաքական հարցերը, հոգիով ռամկավար եւ իր ժողովրդին օգտակար ըլլալու բուն տենչով բռնուած, խաչատուր Աբովեան իր այս երկին մէջ կուտայ այն բոլորը. ինչ որ ամփոփուած էր անոր բազմաբովանդակ ոգիի մէջ: Բնութեան հրաշագեղ նկարագրութիւններու, «քեթխիւտա» ներու վերին աստիճանի զեղարուեստական բնոյթագրութեան հետ միասին, կողք կողքի, անոնց հետ խառնած, Աբովեան մեզ կուտայ իր հրապարակաստական հայեացքները՝ հայ դպրոցի և հագեւորականութեան դերի մասին, իր պատմական ծանօթութիւնները՝ Անիի մասին. ապա այնպիսի զուտ ազգագրական կտորներ, ինչպէս մասնատական կրօնական ծէսերը, նոյնիսկ «մուհարրէմի սուգը», հայերէն ուսանաւորի վերածած. բազմաթիւ պատմական տեղեկութիւններ իրական անձնաւորութիւններու մասին, ուսանաւոր երգեր, ողբեր և այլն. իսկ այս բոլորը գուտ գիւղական գունհիկ լեզուով, որտեղ նա չէ զլացած թուրքերէն և հայերէն այնպիսի բառերու գործածութիւնը, որոնք զրական պատշաճութեան տեսակէտէն անթոյլատրելի են: Աբովեան զեռ կը ցաւի, որ գիշերային զառանցանքի ժամանակ գլուխն եկած մտքերը ցերեկը չեն եղած որ ատոնք ալ գրէր: Երեւակայեցէք, թէ ալ ինչեր չէին մտած ըլլար «Վէրք Հայաստանի» մէջ, եթէ անոր այս ցանկութիւնը իրաբարձուած ըլլար: Աբովեանը իբրեւ գրականապէս զարգացած հմուտ մարդ, իբրեւ գերմանական իշխաններու վրայ կրթուած մէկը, անուշտ լաւ գիտէր, թէ «գեղարուեստական երկի մէջ ինչ բան թոյլատրելի է եւ ինչ բան ոչ. բայց նա ուրիշ պահանջներ սենէր: Գրաբարի կաշկանդութենէն ազատագրուած այդ գերին կ'ուզէր մէկ անգամէն

իր ամբողջ մտաւոր-հոգեկան էութիւնը դնել իր ազգի առաջ: «Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեստսի նման, երեսուն տարուայ փակ լեզուս Աղասին բաց արեց», կ'ըսէ նա. և այդ բացուած լեզուն հեղեղի մը նման կը թափէ իր ազգի առաջ՝ անոր հոգու բոլոր քանձերը, ամէն բան, ամէն բան:

Ուրեմն մեր առաջին «Վէպը» մեզ տուաւ դիւղական կեանքի լոնի վրայ բարձր գեղարուեստական ստեղծագործութեան հետ խառնած պատմութիւն, ազգագրութիւն, հրապարակաստութիւն եւ քնարերգական ամենաբարձակ զեղմունք:

* Պերճ Պաշտանը, իր իսկ բառերով, կը հանդիտանայ Աբովեանի գործը շարունակող, կը վճռէ աշակերտիլ ունոր: Բայց ան շատ առանձնայատուկ կերպով կը հասկնայ Աբովեանը: Բանաստեղծ, հայրենասէր եւ ազգագրագէտ Աբովեանէն՝ նա իրեն համար ուսուցիչ է ընտրած ազգագրագէտը, և ամբողջովին կը հետեւի այդ ուղղութեան: Եթէ Աբովեան իրեն վէպի նիւթ ընտրած էր ժողովուրդի կեանքէն հերոսական դէպք մը, — եւ յատկապէս այդ դէպքը ընտրելով մեզ արգէն իսկ կը ներկայանայ իր հասարակական ուղղութեամբ և միտումով —, իսկ իբրեւ միջավայր ընտրած էր գիւղական կեանքը և այդտեղ նկարագրած էր մի քանի սովորութիւն իր հայրենի քանաքեռի կեանքէն, Պաշտանի համար առաջնակարգ նշանակութիւն ստացաւ այդ իսկ միջավայրը, և ժողովրդական սովորութիւններու նկարագրութիւնը անոր համար դարձաւ առաջնակարգ խնդիր: «Սոս եւ Վարդիթեր» յառաջաբանին մէջ նա կ'ըսէ. «սիրահարուեցանք մեր հարց մեկ թողած աւանդութիւններուն վրայ» և կը վճռէ տալ Աշտարակ գիւղի սովորութիւններու նկարագրութիւնը, մղում ստանալով և. Աբովեանի երկէն: «Բայց, կ'ըսէ, գիտաւորութեամբ մեր գրուածքը ախորժալուր առնելու համար սիրելի ազգիս թէ՛ մեծին և թէ՛ փոքրին . . . երկու կուսից միջնորդութեամբ պատմեցինք Աշտարակ գիւղի սովորութիւնքը . . .

առանց գանազանելոյ լաւն ու վատը:» Այսանդէն կ'երեւի որ բուն վիպական մասը Պռօշեանի համար յաւելուած մէր միայն, գրաւիչ միջոց մը՝ ազգագրական նիւթերը կարգացնել տալու համար:

Եւ հաւատարիմ իր որոշման, Պռօշեան կը նկարագրէ մեզ ամէն բան, ինչ որ կայ Աշտարակին մէջ. հարսանիք իր բուր Նախապատրաստական եւ ընթացիկ սովորութիւններով, ուխտագնացութիւն, եկեղեցական այլ և այլ տօներ և ծէսեր, այգեգործական աշխատանքներ և անոնց հետ կապուած բարքեր, աւանդութիւններ, հաւատալիքներ, նախապաշարմունքներ, անտիապաշտութիւններ, ժողովրդական բանահիւսութիւն իր բոլոր ճիւղերով, և այլն և այլն: Այս «գեղարուեստական» գրողը, որպէս զի տարուան ընթացքին մէջ որ և է բան մը աննկատ չթողու, մինչև անգամ իբրեւ միջոց կ'ընտրէ ժամանակագրական կարգը. «Ծաղկազարդէն սկսած մինչև յետի բարեկենդանի չորեքշաբթի օրը» հանդիպելով, բոլոր նիւթերը կուտայ «Սօս և Վարդիթեր»ի մէջ, խոստանալով մնացած ժամանակը նկարագրել ուրիշ վէպի մը մէջ, և իր խոստումը կ'իրագործէ «Հացի խնդիր»ի մէջ: Եւ այս բոլորը՝ Աշտարակ գիւղի բարբառով: Իր յետագայ վէպերուն մէջ թէև նա փորձեց վիպական տարրին աւելի պատուաւոր տեղ տալ, բայց նա այնուամենայնիւ հաւատարիմ մնաց ինքն իրեն. ոչ մէկ առիթ ձեռքէ չփախցուց, անոնց մէջ մտցնելու պատմական տեղեկութիւն մը, աւանդութիւն մը, յեծանք մը, առանց կապի, արհեստական կերպով ստեղծած առիթներով: Այսպէս կը հասկնար վէպը՝ մեր երկրորդ խոշոր վիպասանը:

*. 1894 թուին Բեգերսպուրկի հայ ուսանողներու մէկ ժողովին մէջ հրապարակ կուգայ իր մէկ աշխատութեան ընթերցանութեամբ՝ Ղազարոս Աղայեանցը: Այդ գործը անոր «Արութիւն և Մանուէլ»ն էր: Սա կը պարունակէր իր մէջ պատանիի մը հոգեկան ազատագրութիւնը՝ խաւար կաշկանդող նախապաշարմունքէն գէպի լուսաւոր գաղափարներ, հոգեկան ստրկու-

թիւնէն դէպի քննադատական ինքնորոշում: Հեղինակի կողմէ «ազգային վիպասանութիւն» անուանուած այս գործը երկար ժամանակ կը ծանչցուի իբրեւ ստեղծագործութեան արդիւնք, հետեւաբար և կը դասուի մեր բանաստեղծական գրականութեան շարքերուն մէջ: Բայց ահա 1893 թուին դորոս եկաւ Ղազարոս Աղայեանցի ինքնակենսագրութիւնը, որու մէջ կը բացակայէր անոր մանկութիւնն ու պատանեկութիւնը. բայց ատոր փոխարէն այնտեղ կար շատ նշանակալից նախագասութիւն մը: «Իմ մանկութիւնն ու պատանեկութիւնը ես մանրամասն նկարագրել եմ «Ար. և Մ.» վէպիս մէջ: Այդ վէպի Արութիւնը ես ինքս եմ»։ Ուրեմն, տեսէք թէ ո՛ր աստիճան հարազատօրէն այնտեղ պիտի նկարագրուած ըլլան կեանքի մը պարագաները, որ այդ «վիպասանութիւնը» կը յանձնորարէ իբրեւ կենսագրութիւն: Ըսենք, առանց այդ խոստովանութեան ալ ընթերցողը կը գտնէր այդ գրուածքին մէջ այնպիսի կտորներ, որոնք զուտ պատմագրական նիւթեր են: Տիգրան Ներսէսեան դպրոցի 50ական թուականներու վիճակի մասին այնտեղ հաղորդուած են մանրամասն և խիստ բարեխիղճ տեղեկութիւններ, որոնցմէ այդ Հաստատութեան պատմագիրը կարող է օգտուիլ իբրեւ պատմական յիշատակարանէ մը. տեսուէր, ուսուցիչները իրենց անուններով, իրենց հայեացքներով, մանկավարժական մէթոտով և դաստիարակչական ուղղութեամբ, աւանդուող պարակաները, դասարաններու թիւը, հոգաբարձուներու և ուսուցիչներու յարաբերութիւնը, և հասարակութեան որոշ խաւերու վերաբերմունքը դէպի Ներսէս Աշտարակեցին, և այլն և այլն — որոնք բաւական տեղ կը բռնեն այս «ազգային վիպասանութեան» մէջ: — Այսպէսով ուսասացայ երրորդ վիպասանն ալ հանդիսացաւ ոչ իբրեւ ստեղծագործող բանաստեղծ, իր վէպերուն մէջ, այլ իբրեւ պատմագիր, թէև վիպական արտաքին ձեւով:

*. Սմբատ Զահաղիզեան հայ վիպագրու-

Թեան մէջ պիտի յիշատակուի իբրեւ հեղինակ «Լեւոնի վիշտը» աշխատութեան, գործնականումս «Ժամանակակից վէպը»։ Ուրեմն դարձեալ վէպ։ Տեւնեմը, թէ ինչ էր այդ «վէպը»։

Ասոր բնոյթը հասկնալու համար քիչ մը հեռուէն պիտի սկսինք։ — Հայ մտքի զարգացման պատմութիւնը ունի երկու փոթորկոտ շրջան, որոնք երկուքն ալ կը բնորոշուին ազատականութեան բողոքմամբ։ Առոնցմէ մէկը այն ժամանակաշրջանին է, որ կը կոչուի Ռուսիոյ «60ական թուականներ», այդ շրջանին գաղափարական ղեկավարն էր Ստեփաննոս Նազարեանց։ Իսկ միւսը 70—80ական թուականներուն էր, և անոր գլուխն էր կանգնած Գրիգոր Արծրունի։ Հայկական իրականութեան պահանջներուն յարմարեցուած ազատականութիւնը մեր մէջ հարկադրուած էր կանգ առնել դեռ այնպիսի խնդիրներու վրայ, որոնք Արեւմտեան Եւրոպայի, նոյնիսկ Ռուսաստանի մէջ չտեսնուած էին. բայց ինչ ընել, այդ էր մեր իրականութիւնը։ — 60ական թուականներու այդ ազատական շարժման ստեղծուածքն էր Սմբատ Շահազիզեան։ Բանաստեղծական ընդունակութիւններով օժտուած այս գործիչը կամեցաւ իւրովսան ծառայել ընդհանուր գործին, և մեզի համար ստեղծեց իր Լեւոնը։ Գործողութիւններէ բոլորովին զուրկ այս «վէպը» սակայն շատ հարուստ է Լեւոնի խորհրդածութիւններով։ Պայրընեան տրամադրութեամբ համակուած Լեւոնը մեզ կուտայ իր նազարեանական գաղափարները, և հեղինակը իր գրուածքին մէջ առիթներ կը ստեղծէ որ իր հերոսը ըստ կարելոյն լրիւ արտայայտուի կարողանայ. իսկ Լեւոնը կը խօսի։ Նա բաց չի թողուր ոչ մէկը այն խնդիրներէն, որոնք կը շօշափուէին նազարեանական ազատական դպրոցին մէջ։ Նա կը խօսի դրաբարի անպետքութեան և աշխարհաբարի կենսունակութեան մասին, քահանայի և ժողովուրդի յարաբերութեան մասին, կովկասի գեղեցիկ բնութեան, աւազակաբարոյ ժողովրդեան մասին, պաշտօնեաներու կաշառակե-

րութեան, ժողովրդի անգիտութեան մասին։ Վաճառականներու շահամոլութիւնը և անազգասիրութիւնը զայն կը դադեցնեն. իսկ առհասարակ խորը զայն կը խոցէ մայրենի լեզուի արհամարհումը վիճակը հայերու մէջ. նա կը խօսի կանանց կըրթութեան և իրաւահաւասարութեան մասին, կնոջ դաստիարակչական կոչման մասին, վերջապէս հայ վարժապետի տգիտութեան, հայ կրօնաւորի անտրամադատութեան մասին, իսկական կրօնի բացակայութեան մասին մեր մէջ։ Եւ այս վէպը կը վերջանայ մի խիստ «վիպական» գծով։ Լեւոնը կը պահանջէ Ակադեմիա Էջմիածնի մէջ, որ լուսաւորութեան աղբիւր ըլլայ հայերու համար։

Ինչպէս կը տեսնենք, «Լեւոնի վիշտ» ալ ոչ այլ ինչ է, և թէ ոչ ոտանաւորի մէջ հագցուած կրկնութիւն՝ Նազարեանցի գաղափարներուն և անոր հրապարակաստեղծական հայեացքներուն։ Ս. Շահազիզեան նոյն բանը ըրաւ 1881 թուին արձակով. — ինչպէս խոստացած էր իր վէպին մէջ — մեծ հատորի մը մէջ, որ ուղղուած էր Աղէքսանդր Երիցեանի դէմ ի պաշտպանութիւն Նազարեանցի գաղափարներուն։

Մ. Յ.

Շարունակելի

«ՏԱՃԱՐ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ,

Վերջին անգամ ըլլալով կ'ազդարարենք իրենց բաժնեգիրն ցարդ չվճարող բաժանորդներուն թէ պէտք է մինչեւ ներկայ յունիս ամսոյ, այն է այս շրջանի Ա. վեցամսեային վերջը իրենց հաշիւը մտքին կ'մ ուղղակի թերթիս խմբագիր անօրէնին եւ կամ մեր գործակալներուն հետ։ Նոյն թուականէն անդին անվճար մնացած թերթերու առաքումը պիտի հարկադրուինք դադարեցնել։ — Դրամ ղրկելու դիւրին և ապահով միջոցն է մանսա-թուսը, որուն վրայ եթէ ղրկողին անունն եւ հասցէն որոշակի գրուի, նա մակ գրելու իսկ պէտք չկայ։

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԴԱԻԱՌԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ վրայ վերջին օրերս հասած նամակներն եւ հեռագիրները շատ տխուր տպավորութիւն գործեցին Սաճն ժողովին վրայ, որ որոշեց յանուն նորընտիր Վարչութեան պատգամաւորութեամբ մը գիւմուս ընել Բ. Դուռ, եւ պարզել վերջին օրերու քսամակի գէպերը՝ որոնք կատարուած են իշխանութեանց աչքին առջեւ: Այս դիմումը որոշուեցաւ հաղորդել Ազգ. ժողովին, եւ եթէ անբաւական դատուին ձեռք առնուած միջոցները, Ազգ. ժողովը ինք պիտի որոշէ ինչ որ պիտի գործադրուի: Վարչութիւնը որոշած է յառաջիկայ շաբթու Վարչապետին եւ միւս նախարարներուն վերադարձէն ետք ալ ընել հարկ եղած ձեռնարկները, եւ պահանջել դաւառաց անդորրութիւնն երաշխաւորող կորուզի միջոցներու գործադրութիւնը:

Բաղէշի առաջնորդ Տ. Սուրէն Մ. Վ. կը հեռագրէ թէ կուսակալը (որ եղած խնդրանաց վրայ պաշտօնին ղուսը կը մնայ, եւ երկու վաշտ զօրքով վերջին սպանութեանց գէպին վայրը գացած է), ձերբակալած եւ զրկած է հռչակաւոր աւագակ Հաճի Էօմէրը որ բանտարկուած է հիմայ, ուրիշ հօթը աւագակներ ալ ձերբակալած է, սակայն վերջին ոճրագործութեանց հեղինակները ձեռք չեն անցած՝ բացի Էօմէրէն — Մուշէն մասնաւորներու հասած հեռագիրներ կ'ըսեն թէ կառավարութիւնը նոր սկսած է ազդուութիւն ցոյց առլ կարգ մը արիւնոտ աւագակներու գէմ Մուսա պէյ գեռ չէ պատասխանած իրեն եղած հրաւերին: Քորդերը լեռը փախեր են, իսկ Մուսա պէյին եղբայրը՝ Գասըմ պէյ՝ ղինուած Բուրդերով ազատօրէն կը պտտի — Վանէն եւս նոր առեւանդութեանց եւ հողային նոր գրաւմանց տխուր լուրեր կը հասնին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ անցեալ շաբթու յուղումնայից բայց ապարդիւն նիստ մը ունեցաւ: Նոր վարչութեան ծրագրէն

զատ, որու հիմնական ոգին թէ ինք համերաշխութեան վարչութիւն մը պիտի ըլլայ, ուրիշ ոչինչ հասկցուեցաւ, եւ նիստը դադրեցաւ ազմուկի մէջ, առանց որ եւ է արդիւնքի: Այս շաբթուին համար դարձեալ նիստի հրաւիրուած էր:

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ, ԴՆ. Նիստին մէջ, ի նկատ առնելէ ետքը Ամերիկայի առաջն. փոխանորդ Տ. Պօղոս Վ. Գաֆթանեանի նամակները Տ. Մուշեղ Եպիսկոպոսի գէմ եւ այս վերջին պատասխանները, որոշեց է գրել Ն. Սրբազնութեան թէ ինքը իրիւ Կիլիկիոյ Եպիսկոպոս, իրաւասութիւն չունի էջմիածնական թիւի մը մէջ — ինչպէս է Ամերիկա — հողեւոր-վարչական պաշտօն լուս:

ԴՊԻՐՆԵՐՈՒ ղինուորագրութեան խնդրոյն տոթիւ Կրծն. ժողովը ի նկատ առնելով որ անոնք ռարկաւաղութեան աստիճան չունենալով հանգերձ, իրենց մասնակցութիւնը անհրաժեշտ է եկեղեց. արարողութեանց կատարման համար, որոշեց է պնդել որ անոնք զերծ մնան ղինուորական ծառայութենէ:

ՍԿԻԻՏԱՐԻ Ս. Կարապետ եկեղեցւոյ աւագերէցութեան կոչուած է Տ. Արիստակէս քհնյ. Վարժապետեան: Մեր շնորհաւորութիւնները:

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Պ. Աղեքսանդր Մանթաշեանի հողւոյն համար վաղը, կիր. 12 Յունիս, Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի պատարպէ Վանայ առաջն. Տեղապահ Գեր. Տ. Յովսէփ Ս. Արքեպ. Սարաճեան, եւ ի վերջոյ հանդիսաւոր հողահանգստեան պաշտօն պիտի մատուցուի: Ներկայ զրուուելու հրաւիրուած են մայրաքաղաքի Ս. Եկեղեցեաց քարոզիչներ, քահանաներ, Ազգ. Ընդհ. եւ Վարչ. ժողովոց եւ Տեսուչ եւ Թաղ. Խորհրդոց անդամներ:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵՋԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՆՔԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԻՒՆՆԵՐ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆ

ԵՒ ԻՐ

Պատմութիւնը, Վարդապետութիւնը, Վարչութիւնը, Բարեկարգութիւնը, Արարողութիւնը, Գրականութիւնը ու ներկայ կացութիւնը.

Գաղղիներէն հրատարակուած եւ այժմ Հայերէնի վերածուած՝ յոյժ շահեկան աշխատասիրութիւն մը, բաղկացած 270 մեծադիր էջերէ: Գին 15 դրուշ (բօսթի ծախքով 18 դրշ. կամ 4 ֆր.): Կեդրոնատեղի՝ Վ. եւ Հ. Տէր-Ներսիսեան վաճառատուն, Պահճէ Գարու, Կ. Պոլիս: Կը գտնուի նաեւ ամէն գրավաճառներու քով:

ԵՐՈՒՄԵՆԻ ՄԵՍԻԱՅԵԱՆ. — Ֆրանս. արդի գրաւթականութեան ընկերային ձգտում.

նկրը. — Դրական ուսումնասիրութիւն պատկերազարդ, Լեւոն Լաբինդի յառաջաբանով: 126 էջ: Գին 3 դրշ.:

ԲԷՆԸՐԱՅԻՍԻ. — Նոր ֆարոգ. — «Բիբլոյժը արդար է» բնաբանով, — 32 էջ, գին 2 դրշ.: Հասոյթին 4 ու կէսը պիտի յատկացուի Զէյթունի Շրջանաւարտից Միութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԻՒՆՔ

Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆԻ

1. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ. — Ի պէտս բանասիրաց եւ բարձրագոյն ուսանողաց, գին 7 դրշ.:

2. ՏԻԵՂԵՐԻՔ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ. — Իբրիթ թէնի հատուածն անմահասիրով՝ գին 1 ու կէս դրշ.:

Կը վաճառուին Կ. Պոլիս Գըլըճեան գրատունը, եւ մեծաքանակ հեղինակին քով: 2-3